



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
**ՆԱԽԱԳԱՀ**

STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE  
REPUBLIC OF ARMENIA  
**CHAIRMAN**

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ.՝ 50 20 20, 59 46 01

3,7 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 50 20 20, 59 46 01

№ 44-Ա

« 16 » փետրվարի 2012 թ

**ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի N 2204-Ա  
հրամանում լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելված 2-ի 8-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի «Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին» թիվ 2204-Ա հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով.

«8) «Տեղեկություն՝ Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին (01.01.11թ.-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար)» հաշվարկի ձևաչափը՝ համաձայն N8 հավելվածի:»

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի «Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին» թիվ 2204-Ա հրամանը լրացնել նոր՝ N8 հավելվածով, համաձայն Հավելվածի:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Մ. Փաշայանին՝ ապահովել սույն հրամանի ամբողջական տեղադրումը ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ